ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԱԺՈՂԿՈՄԱՏ

ՅԵՐԵՎԱՆԻ ՅԵՐԵՔ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՓՈՐՁԸ

372.21
Ե-64

ԼՈՒՍԱՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ 1940

372.21
С-64

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄ

120 = 10
371.2

ТССР дөвлет китапханасы
ГОСБИБЛИОТЕКА ТССР
Инв. № 3375 3

ՅԵՐԵՎԱՆԻ
ՅԵՐԵՔ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՓՈՐՁԸ

ТССР дөвлет китапханасы
ГОСБИБЛИОТЕКА ТССР
Инв. № 3

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

ԼՈՒՍԱՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1940

09 APR 2013

50.722

Խմբագրեցին՝ Ս. Սամվելյան, Ա. Շահինյան
Տեխ. խմբագիր և սրբագրիչ՝ Վ. Գողոսյան

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-ի ԳՍՀ
Ա. Մ. Մ. Մ

զրույցի համար 11-նկար։ Այդ նկարներից կազմեցի ժուռնալ-պատմվածք։ Նկարները, նախքան ժուռնալ-պատմվածք պատրաստելս դասավորեցի ըստ իմ պատմվածքի բովանդակության։ Ցերբ իմ պատմվածքն արդեն պատրաստ եր, սկսեցի նկարները փակցնել ժուռնալին։ Նկարները յես տեղավորեցի միայն աջ եջերում, ազատ թողնելով ձախ եջերը, վորովհետև յերբ ձախ եջերում ել են նկարներ լինում, այդ դեպքում մանուկների ուշադրությունը ցըրվում է, և ստացած տպավորությունն ուժեղ ու խորը չի լինում։

Աժեն մի եջում տեղավորեցի միայն մեկ նկար, զարձյալ նույն դիտավորությամբ։ Այնուհետև պատմվածքս գրի առա և սկսեցի մշակել զուտ մանկական պահանջների տեսակետից. ստացվեց ահա այս.—

Մոսկվայում ապրում են յերեք ընկերուհի։ Ահա նրանք (նկար). Գրիզադուբովան, Ռասկովան և Ոսիպենկոն։

Նրանք շատ սիրով ընկերուհիներ են։ Շարունակ միասին են լինում. միասին են զբոսնում։ Ահա նրանք զբոսնում են (նկար)։

Նրանք ել Ձեր մայրիկների պես մայրիկներ են։ Նրանք ել Ձեզ պես բալիկներ ունեն։ Ահա նրանցից մեկը և իր փոքրիկ բալիկը։ Անունը Սոկոլիկ (նկար)։ Ահա մյուսը և իր փոքրիկ աղջիկը, անունը Տանյա (նկար)։

Այս յերեք ընկերուհիները՝ Գրիզադուբովան, Ռասկովան և Ոսիպենկոն վորոշում են ոդաչու դառնալ։ Գնում են դպրոց և սովորում։ Ահա նրանք դաս են սովորում (նկար)։

Սովորում են, դառնում ոդաչուներ։ Շատ լավ ոդաչուներ։ Ահա նրանք ոդաչույի շորեր հագած (նկար)։

Նրանք ինքնաթիռ են նստում և թռչում։ Շատ են թռչում, վոր թռչելը լավ սովորեն, վորոշում են թռչել հեռու, շատ հեռու, այնքան հեռու, վոր վոչ մի կին ոդաչու այդքան հեռու թռած չլինի։ Ահա նրանք մտածում են (նկար)։ Յերեք ոդաչուհիները ընտրում են ինքնաթիռ, նրանց ինքնաթիռի անունն եր «Ռոզինա»։ Ստանում են ուտելիք, շորեր, բենզին։ Վերցնում են ռադիո և ուրիշ շատ բան։ Հետո գնում են ընկեր ՍՏԱԼԻՆԻ մոտ։ Ահա ընկեր ՍՏԱԼԻՆԸ (նկար)։ Ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ պատմում են, թե ինչ են ուզում անել։ Ընկեր ՍՏԱԼԻՆԸ ժպտալով լսում է նրանց ուրախանում է, հեռաքրքրվում է, շատ հարց ու փորձ է անում։ Տեսնում է, վոր նրանք լավ են պատրաստվել։ Խորհուրդներ է տալիս։

Դե, վոր այդպես լավ եք պատրաստվել, գնացեք և անվախ թռեք,—ասում է ընկեր ՍՏԱԼԻՆԸ։ Նրանք շատ-շատ ուրախանում են, վոր ընկեր ՍՏԱԼԻՆԸ համաձայնվում է իրենց թռչելուն։

Յերեք ոդաչուհիները մի որ առավոտյան ուրախ-ուրախ նստում են իրենց ինքնաթիռը և թռչում։ Ահա նրանց ինքնաթիռը (նկար)—«Ռոզինան»։

Սկզբում լավ են թռչում, լավ յեղանակ է լինում։ Նրանք ուրախ են ու յերջանիկ. թռչում են հա թռչում։ Ամբողջ որը թռչում են մինչև յերեկո։ Ցերը շատ են հեռանում, ընկնում են ամպերի մեջ, սև ամպերի։ Անձրևը թափվում է, ուժեղ քամին փչում է, հա փչում։ Քիչ է մնում ինքնաթիռը ջարդվի։ Ենքան մութ է լինում, վոր նրանց աչքերը չեն տեսնում։ Թռչելը շատ է դժվարանում։ Բայց նրանք չեն վախենում։ Նրանք անվախ են։ Շարունակում են ճանապարհը։ Շատ են թռչում։ Ամպերից վոր դուրս են գալիս, տեսնում են, վոր վառելու բենզինը վերջանում է։ Ինչ անեն, ինչ չանեն։ Ինքնաթիռն առանց բենզինի չի գնա։ Ուզեն չուզեն պիտի իջնեն։ Իջնում են մի վատ տեղ։ Չորս կողմը գետ եր, ջրեր, ցեխ, ճահիճ, անտառներ, դաշտաններ՝ արջ, աղվես։ Ենպես վատ տեղ է լինում, վոր չորս կողմից դուրս գալու ճանապարհ չի լինում։ Մնում են ենտեղ։ Ահա լուրը գալիս է, վոր յերեք ոդաչուհիները չկան, տեղը չի իմացվում։ Մենք շատ մարդիկ, շատ ինքնաթիռներ ենք ուղարկում, վոր գտնեն։ Ինչքան մարդ են գալիս, չեն գտնում։ Բայց նրանք ենտեղ չեն վախենում։ Իմանում են, վոր մենք իրենց ենք մարդ գալիս։ Նրանք իմանում են, վոր ընկեր ՍՏԱԼԻՆԸ իրենց կոգնի։ Մեր տղամարդ ոդաչուները նրանց տեղը գտնում են և նրանց ազատում։ Հետո նրանք գնացք են նստում, վոր վերադառնան Մոսկվա։ Մենք անհամբեր սպասում եյինք նրանց գալուն։ Ընկ. Կագանովիչը վերցնում է ծաղիկներ և գնում ավտոյում, ինքն ել ավտո նստում և գնում կայարան, վոր նրանց դիմավորի։ Կայարանում շատ-շատ մարդ կար։ Նրանք յեկել եյին դրոշակներով, ծաղիկներով, նկարներով։

Բոլորն ուրախ սպասում եյին գնացքի գալուն։ Ցերաժեշտությունը նվագում է։ Ահա, ահա, գնացքը յեկավ ու կանգ առավ։ Ահա յերեք ոդաչուհիներն իջնում են գնացքից։ Ընկեր Կագանովիչը բարևվում է նրանց, շնորհավորում, ծաղիկներ տալիս։ Ուռա-ուռա,—կանչում են բոլորը։ Կեցցեն մեր հերոս ոդաչուհիները։ Կեցցե՛ մեր Մեծ առաջնորդ Ընկեր ՍՏԱԼԻՆԸ։

Ցես իմ այս պատմվածքը կազմելու ժամանակ նպատակ եմ

ունեցել յերեխաներին ցույց տալ, թե ինչպես մեզ մոտ, մայրիկների համար կան բոլոր պայմանները, վորպեսզի նրանք առաջադիմեն, վոր նույնիսկ հերոսուհի դառնան, յերեխաները պետք է տեսնեն, թե ինչպես համառ աշխատանքը բարձրացնում է մարդուն։ Ցես աշխատել եմ ցույց տալ, թե ընկ. ՍՏԱԼԻՆԸ վորքան հոգատար, վորքան ուշադիր է դեպի կին ողաչուները, դեպի նրանց խիզախ գործը, դեպի նրանց կյանքի անվտանգությունը։ Թե ինչպես Ստալինի անունն իրենց սրտերում նրանք գնացին դեպի հերոսությունը, դժվարությունների առաջ չհուսահատվեցին, հերոսություն գործեցին և հերոս դարձան։

Իրական թռիչքի շատ մոմենտներ, թեկուզ և հետաքրքիր, յես չեմ մտցրել իմ պատմվածքի մեջ, վորպեսզի պատմվածքը չծանրաբեռնվի, ծավալը չմեծանա։

Ցես չեմ կազմել թռիչքի մեխանիկական ընթացքն՝ իր մանրամասնություններով։ Ցես ընտրել եմ միայն վորոշ մոմենտներ, վորոնք նպաստում են իմ վերը հիշած նպատակադրմանը։ Պատահել են դեպքեր, յերբ յես գիտակցաբար թեթևվակի շեղում եմ թույլ ավել թռիչքի իսկական ընթացքից հոգուտ նյութի հիմնական իմաստի։

Լեզվի տեսակետից աշխատել եմ, վորքան հնարավոր է, լինել պարզ, մատչելի, կոնկրետ։ Նախադասությունները մեծ մասամբ կարճ-կարճ են, բովանդակալից։ Խուսափել եմ յերկար նախադասություններից։

Բառերն ընտրել եմ յերեխաներին մատչելի բառապաշարից։ Ցերբեմն ընտրել եմ այնպիսի բառ, վոր թեկուզ և ամբողջովին չի արտահայտվում իմ ցանկացած իմաստը, բայց հասկանալի է յերեխաներին։ Նյութը կազմել եմ կենդանի, խոսակցական լեզվով։

Լեզվական այս աշխատանքը կատարել եմ վոչ միայն նրա համար, վոր իմ նյութը լրիվ հասցնեմ յերեխաներին, այլ և այն նպատակով, վոր յերեխաները կարողանան դասագրքի ոգնությամբ հեշտությամբ վերարտադրել։ Սա նպաստում է մանական խոսքի զարգացմանը։

Նյութը մշակելիս աշխատել եմ տեղ-տեղ, վորքան այդ հնարավոր է, լինել շատ կոնկրետ, անմիջական. որինակ, ընկ. Կագանովիչը վերցնում է ծաղկեփնջեր, գնում է ավտոյում, ինքն էլ ավտո նստում և գնում կայարան, վոր դիմավորի հերոսուհիներին. Մեղմացրել եմ ուժեղ տխրություն առաջ բերող մոմենտները, վորովհետև ուժեղ տխրությունն ու վախը վատ են անդրադառնում յերեխաների վրա։ Այս ամենը խնդրի մի կողմն է։ ուրիշ խոսքով մինչ այժմ մեր ասածը վերաբերվում է նյութի մշակմանը։ Խնդրի մյուս կարևոր կողմը դա նյութը տալն է, նյութը յերեխաներին հասցնելը, այլ կերպ ասած ավանդումը։

Ժուռնալ պատմվածքի նյութի ավանդումը միևնույն ժամանակ և մանկավարժական աշխատանք է, և գեղարվեստական։ Դասախարակը պետք է շարունակ նկատի ունենա, վոր իր պատմվածքը լսողները մանուկներ են, 5—7 տարեկան, և յերբեք դուրս չգալ նրանց պահանջների ու հնարավորությունների սահմաններից, միևնույն ժամանակ պիտի ամեն կերպ աշխատի մանուկների մեջ առաջ բերել գեղարվեստական հույզ, գեղարվեստական հաճույք։

Ցես այս պատմվածքի (ինչպես և մյուսների) ժամանակ ամենից առաջ աշխատել եմ լրիվ տիրապետել նյութին, ուսումնասիրել եմ նրա առանձին մասերի առանձնահատկությունները— աշխատասիրություն ոգաչու դառնալու, մանրակրկիտ նախապատրաստություն, ընկ. ՍՏԱԼԻՆԻ հոգատարությունը, թռիչքի սկիզբն ուրախ, շարունակությունը դժվար, տոկունություն, հաջող վերջ, ուրախ վերադարձ։ Սրանից յուրաքանչյուրը պատմելու տարբեր յեղանակ, տարբեր տեմպ է պահանջում։

Ցես աշխատել եմ իմ ձայնի ինտոնացիան և տեմպը հարմարեցնել յուրաքանչյուր մոմենտին. որինակ՝ սկիզբը պատմել եմ վերին աստիճանի խոսակցական, կենդանի ձևով. թռիչքի առաջին մասն՝ ուրախ, մասամբ դանդաղ, հանգիստ բարձր տոնով, յերկրորդ մասը՝ ցածր տոնով, բառերը մի քիչ ավելի արագ արտասանելով, վերջին մասը հաստատակամ, աննկուն տոնով, բառերի ավելի վորոշակի ու շեշտված արտասանությամբ և այլն։

Այդ ամենը, վորքան յես կարողացել եմ, կատարել եմ զգուշությամբ և չափավոր, զգուշանալով ծայրահեղություններից։ Ժուռնալ-պատմվածքից ու ձայնի ինտոնացիայից բացի, յես չափավոր կերպով ոգտվում եմ նաև դեմքի միմիկայից, իսկ յերբեմն նաև ձեռքի զուսպ շարժումներից։

Այս բոլոր ձևերը հարմար դեպքերում ոգտագործելով հնարավոր է լինում հասնել վորոշ դրական արդյունքի։

Կազմեց Լ. Ա.

II

ԱՍՏՂԻԿ ԽԱՆԻԿՅԱՆ

Ցերևանի № 26 մանկապարտեզի յերեխաները ցրվեցին իրենց տները։ Լռություն տիրեց. այլևս չեն լսվում յերեխաների ուրախ ու բերկրալից ձայները։

Աստղիկ Խանիկյանը, միջակ խմբի դաստիարակը, մնաց մենակ։ Նա սկսեց նախապատրաստվել հաջորդ որվա համար՝ պատրաստել վրձիններ, գունավոր թուղթ, մկրատներ, առանձին ափսեներով սոսինձ, փալասիկներ, և ամեն բանից առատ-առատ, վորպեսզի բավարարի յերեխաների պահանջը, յեթե լրացուցիչ ելի վորևե բան պատրաստել ցանկացողներ լինեն։

Ընկ. Խանիկյանը լավ է տիրապետում վրձինին ու մկրատին։ Նրա խմբի յերեխաները սիրում են իրենց դաստիարակին, իրենք ելլավ են կտրտում, նկարում, պարում (Զեմման, Լաուրան և ուրիշները)։ Ընկ. Խանիկյանի մեջ ամենաեյականը, վորը խիստ աչքի յե ընկնում, սերն է դեպի յերեխաները և հանգիստ, լուրջ ու հավասարակշռված վերաբերմունքը դեպի դաստիարակչական աշխատանքները։

Ընկ. Խանիկյանը շատ հոգատար է դեպի յերեխաները և կարողանում է գտնել նրանցից յուրաքանչյուրի ստեղծագործական հակումները։ Լինելով ուշադիր դեպի իր խմբի յերեխաները, ընկ. Խանիկյանն աննկատելի կերպով վերափոխում է նրանց բնավորությունն ու վատ սովորությունները։

Դերենիկ անունով, հինգ տարեկան, մի յերեխա, վորը մանկապարտեզ եր մտել ամենավատ սովորություններով՝ կռվարար եր, հայհոյասեր, աշխատանքից խուսափում եր, դիսցիպլինային չեր յենթարկվում, այժմ մեծ չափով փոխվել է. դարձել է քաղաքավարի մաքրասեր և շատ է սիրում զանազան նյութերից ժանր-ժանր բաներ պատրաստել։

Հոկտեմբերյան արևոտ առավոտ է։ Ընկ. Խանիկյանը վազում արդեն մանկապարտեզումն է։ Նա խնամքով սանրված է, սպիտակ, լավ հարթուված զոդնոց ու թեթև կոշիկներ հագած։

Նա սիրալիր դիմավորում է յերեխաներին, բարևում է նրանց, հարց ու փորձ անում, թե ինչպես յեկան հասան, ինչպես են զգում իրենց և կատակում է նրանց հետ։

Մոտենում են տոնական որերը. յերեխաները շատ նորանոր տպավորություններ ունեն, ուստի ամեն մեկն աշխատում է մյուսի առաջն ընկնել պատմել. «Մայրիկն ինձ համար նոր տուֆլիներ է գնել»—ասում է Լենան և ցույց է տալիս իր նոր կոշիկները. ամեն մեկն առանձին զոհունակությամբ պատմում է իր նորությունները։

Այսոր ընկ. Խանիկյանի մոտ յերեխաների ընտրությամբ տպատ զբաղմունք է։ Նախապես ամեն բան պատրաստ դրված է սեղանների վրա։ Սեղաններից մեկի վրա աչքի յեն ընկնում վառ գույնի թղթեր, վորոնց հետ դրված են նաև թաց փալասիկներ, վրձիններ, ափսեներով սոսինձ, մկրատներ, այս բոլորը կտրելու, կպցնելու համար են։

Մի ուրիշ սեղանի վրա շարված են կավե գնդիկները՝ կլոր տախտակների վրա։

Յերրորդ սեղանի վրա դրված են նկարչության թղթեր ու գունավոր մատիտներ։ Չորրորդ սեղանի վրա՝ մոմեր, կոճեր, լուցկու տուփեր, ֆանտազիայից զանազան շրջաններ, թուղթ, սոսինձ, վրձիններ, մկրատներ, ստվարաթղթի շրջաններ, զանազան շաբլոններ, թաց փալասիկներ։

Նախաճաշից հետո դաստիարակը յերեխաներին առաջարկեց զբաղվել, ով ինչով ցանկանում է։

Յերեխաները մեծ մասամբ մոտեցան ծեփելու, կտրելու ու կպցնելու համար նախապատրաստված սեղաններին։ Մի քանի յերեխաներ մեծ սիրով սկսեցին ավելցուկ նյութերից զանազան բաներ պատրաստել, իսկ յերկուսն ել սկսեցին նկարել։

Ընկ. Խանիկյանը լսում է ու տեսնում բոլոր յերեխաներին։ Ալբերտ անունով մի յերեխա խնդրեց ոգնել իրեն լուցկու տուփերից գնացք պատրաստելու, դաստիարակն անմիջապես մոտեցավ, պահանջված ոգնություն ցույց տվեց, վորից հետո յերեխան շարունակեց իր աշխատանքն ու գնացք պատրաստեց։

Այն սեղանի մոտ, ուր յերեխաները կտրտում եյին, շատ ուրախ եր, անընդհատ խոսում եյին։ Ռիման վարպետորեն կտրեց, մի տուն և շինել՝ ամբողջովին նախշերով ծածկված և ցույց

և տալիս իր հարևաններին՝ Ջեմային, Եմային և ուրիշներին— «տեսեք, ինչպիսի տուն է, ինչպես հեքիաթում» և պատմում է, թե ինչպես այդ տնակում ապրում է այծը, իսկ մյուսներն ունկընդրում են նրան ու շարունակում աշխատել։

Ծեփի սեղանի մոտ յերեխաներից յուրաքանչյուրն իր տախտակի վրա զանազան իրեր է պատրաստել։ Լաուրան դիմում է Ասիային—«տես ինչքան գազար, պամիդոր, վարունգ ունեմ, յես այսպիսի կոլխոզ ունեմ»։

Բոլոր յերեխաները աշխուժ ծեփում էին։

Ընկ. Խանիկյանը սեղանից-սեղան էր անցնում ու ամեն տեղ ոգնում, լսում, ղեկավարում։

Այն սեղանին, ուր յերեխաներն ավելցուկ նյութերից բաներ էին պատրաստում, Դերենիկը միացրել էր յերկու շրջաններ և ստացել մի ամուր շրջանակ. ահա նա դիմում է դաստիարակին—«այ շրջանակ, սրա մեջ նկար կդնենք ու կկախենք մեր խմբում»։

Դաստիարակը քաջալերեց Դերենիկի մտքը. նոր շրջանակը ցույց տվեց մնացած յերեխաներին և կրկնեց Դերենիկի առաջարկը. բոլորը համաձայնվեցին։

Զբաղմունքը վերջացնելու ժամանակն էր, սակայն յերեխաներից շատերն այնպես էին տարվել, որ դժվարությամբ էին թողնում իրենց զբաղմունքը։

Աշխատանքը վերջացնող յերեխաները ցույց էին տալիս դաստիարակին իրենց պատրաստած իրը, դնում պայմանավորված տեղն ու դնում բակը խաղալու։

Զբաղմունքի ժամանակ յերեխաներն իրենց ազատ էին զգում դաստիարակը նրանց վոչինչ չեր հարկադրում, չեր սահմանափակում նրանց ազատությունը։

Յերեխաների ընտրությամբ ազատ զբաղմունքը ճիշտ եր կազմակերպված։ Տրված նյութը բազմատեսակ եր և բավարար քանակությամբ։

Ընկ. Խանիկյանը յերեխաներին ուժանդակում եր շատ տեղին ու հմտորեն։ Նա հոգատար ու կարող մանկավարժ է։ Հետաքրքրական զբաղմունքների միջոցով ծանոթանում է յերեխաների հետաքրքրություններին և աշխատում զարգացնել նրանցից յուրաքանչյուրի ստեղծագործական ունակությունները։

Զանգվի ափին զբոսնելիս, դաստիարակը յերեխաների ուշադրությունը դարձրեց դեպի Արարատը բացվող հիասքանչ տեսարանը։ Յերեխաները հետաքրքրված զանազան հարցեր տեղացրին. «սարի գագաթն ինչու յե սպիտակ», «իսկ ձույնն այնտեղ ինչու չի հալվում», «Արարատ սարի բարձրությունն ինչքան է», «ով կարող է բարձրանալ Արարատ» և այլն։

Ընկ. Խանիկյանը հիանալի գիտե, որ յերեխայի ծանոթացումը բնությանը նպաստում է նրա բազմակողմանի զարգացմանը, հարստացնում է յերեխայի տպավորությունները և հսկայական նյութ է տալիս մանկական ստեղծագործության համար։

Սովորեցնել յերեխաներին հասկանալու բնությունը, նկատել նրա գեղեցկությունը, յերանգների և ձայների բազմապիսությունը, հանգեցնել նրանց վորոշ յեզրակացություններին, աստիճանաբար զարգացնել նրանց մտածողությունը կարելի յե միայն այն դեպքում, յերբ դաստիարակը մտածված կերպով կատարի յերեխաներին բնությանը ծանոթացնելու յուրաքանչյուր քայլը։

Ընկ. Խանիկյանը բավարարելով յերեխաների հարցասիրությունը, պարզ ու մատչելի լեզվով, առաջարկեց յերեխաներին թղթից պատրաստել Արարատ սարը։ Բոլորը հիացմունքով ընդունեցին այդ առաջարկը։

Հաջորդ որը խմբի սենյակում, աչքի ընկնող տեղ պատից կախված եր ընկեր Խանիկյանի նկարած Արարատ սարի գագաթի ջրանկարկ ուրվանկարը։

Ջեղավ մի յերեխա, վոր սենյակ մտներ ու չնկատեր այդ նկարը։

Հավաքվեցին յերեխաները և սկսեցին իրենց մեջ խոսել։ Ցույց էին տալիս, թե վորն է մեծ Արարատը, վորը՝ փոքրը, նկատում էին, վոր սարի գագաթը ձյունածածկ է, իսկ մնացած մասը պատած է յերկնագույն ամպերով։

Ընկ. Խանիկյանը նախապես պատրաստել եր սարը շինելու համար անհրաժեշտ բոլոր պարագաները՝ մեծ քանակությամբ թուղթ, սոսինձ, փալասներ, փայտե պատվանդաններ, փայտե ինքնաշեն մեծ վրձիններ ծայրերը շոր փաթաթած, սոսինձ քսելու համար (փոքր վրձինները ավյալ աշխատանքների համար անպետք են և կարող են ջղայնություն պատճառել յերեխաներին)։

Նախաճաշի միջոցին յերեխաների խոսակցության միակ առարկան առաջիկա աշխատանքն եր։ Նախաճաշից հետո դաստիարակն ամբողջ նյութը դասավորեց սեղանների վրա։

Սենյակի աջ ու ձախ կողմերում դասավորված սեղանների շուրջը նստած յերեխաները սոսինձ եյին քսում մեծածավալ թղթի վրա, մի քանի յերեխաներ այդ թղթերը վերցնում ու տանում հանձնում եյին մի այլ խումբ յերեխաների, վորոնք դաստիարակի ղեկավարությամբ ձևավորում եյին Արարատ սարը։

Յերեխաները խմբերի եյին բաժանվել ինքնակամ։ Սարը ձևավորող խումբը չափազանց հուզված եր. Լաուրան ու Զեմման պատվանդանների վրա բարձրանալով ու ձեռքերը բարձրացնելով ցույց եյին տալիս—«այ ինչպիսի գեղեցիկ սար կլինի»։

Ընկ. Խանիկյանը արագ մոտենում եր մերթ մեկ, մերթ մյուս խմբին և ոգնում, ցույց տալով, թե ինչպես պետք է քսել սոսինձը, ինչպես բռնել վրձինը, նրանց վորոնք սարի ձևավորմամբ եյին զբաղված ոգնում եր, վոր իսկականին նման ստացվի սարը։

Զբաղմունքը շատ ժխում եր անցնում. յերեխաներն ուրախ ու աշխուժ մտքերի փոխանակում եյին կատարում։ Դաստիարակը հայտնեց, վոր աշխատանքն այսոր չեն կարող վերջացնել, կատարած աշխատանքը կթողնեն չորանա, իսկ հետո կծածկեն այն գիպսով, գագաթը կներկեն, հալած մոմով կպատեն։ Այն ժամանակ իսկական Արարատ սար կստացվի։

Սերյոժան ու Ալբերտն առաջարկեցին սարի փեղերին տալ կոլտնտեսային դաշտերի տեսք, ուր արածի կոլտնտեսային նախիրը։ Բոլորը համաձայնվեցին։ Այսպիսով վերջացավ զբաղմունքը։ Յերեխաները թողնելով վրձիններն ու թուղթը, դուրս են գալիս ձեռքերը լվանալու։

Ընկ. Խանիկյանը չի բավականանում յերեխաների հետ կատարած անմիջական աշխատանքներով։ Նա աշխատանք է կատարում նաև ծնողների հետ, գումարում է ծնողական ժողովներ, սանձին զրույցներ է ունենում ծնողների հետ, ոգնում է նրանց՝ տանը յերեխաների համար անկյուն կազմակերպել, պարզ ու հասկանալի ձևով խոսում է այն մասին, թե յերեխաները տանն ինչով պետք է զբաղվեն. այդ նպատակով տվել է յերեխաների տնային ռեժիմը։ Նա գիտե մանկապարտեզից տուն վերադառնալուց իր խմբի յերեխաներն ինչով են զբաղվում։ Ծնողներից վոմանք հաճախ գալիս են նրա մոտ իրենց յերեխաների մասին զրուցելու և այս կամ այն հարցում նրա խորհուրդն իմանում։ Նա շատ համեստ է, և քիչ է խոսում իր մասին։

Ընկ. Խանիկյանը ավարտել է միջնակարգ դպրոց, ապա սովորել է մանկավարժական ինստիտուտում, սակայն վատառողջության պատճառով 3-րդ կուրսից թողել է այն։

Ընկ. Խանիկյանն 12-տարի յե, ինչ աշխատում է նախադպրոցական ասպարիզում։

Ընկ. Խանիկյանի նման դաստիարակներ մենք շատ ունենք, նրանք ամբողջ յեռանդով ու սոցիալիզմի գործին նվիրվածությամբ դաստիարակում են ՍՍԱԼԻՆՅԱՆ դարաշրջանի նոր յերջանիկ սերունդը՝

Կազմեց Ա. Հունանյան

III

ՖԼՈՐԱ ՅԵՂՅԱՆ

(Ն. Գ. Ժ. Կ-ի մանկապարտեզ)

Մի քանի յերեխա՝ արժունկները հենած ծնկներին, մյուսները՝ աթոռակներին հենված. հետաքրքրությամբ վառված աչքերով նայում են ընկ. Ֆլորային։

Նա պատկերավոր, տպավորիչ ու հուզիչ կերպով պատմում է, թե Սուսաննայի մայրիկն ինչպես դարձավ հերոս ոդաչու և թե ինչպես Սուսաննան խնդրում է մայրիկին՝ իրեն տանել Մոսկվա ընկ. ՍՏԱԼԻՆԻ մոտ, վորպեսզի նա տեսնի ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ ու ասի նրան, վոր ինքն էլ է վորոշել, յերբ մեծանա անպայման իր մայրիկի պես հերոս ոդաչու դառնա։

Ամբողջ խումբը մեծ հետաքրքրությամբ լսում է իրենց դաստիարակի պատմածը «Ոդաչու մայրիկի» մասին։ Ընկ. Ֆլորայի միմիկան, աչքերի արտահայտությունը, զուսպ շարժումները, ձայնի յերանգները, վորոնք խիստ բնական են ու տեղին, լրացնում են նրա պատմածը. տպավորության ուժգնությունն իր գագաթնակետին է հասնում, յերբ նա վերին աստիճանի հաջող կերպով տալիս է ոդանավի սվվոցը, բարձրանալու և իջնելու ժամանակին։

Պատմելիս, ընկ. Ֆլորան դիմում է բոլոր յերեխաներին, վորով նա մտերմություն է հաստատում նրանց հետ։ Յերբ նա նկատում է, վոր յերեխաներից վորևե մեկն անուշադիր է, անմիջապես հայացքը բեվեռում է այդ յերեխայի վրա, խոսքը կարծես թե նրան է ուղղում և այսպիսով յերեխան նորից գրավվում է պատմվածքով։ Ընկ. Ֆլորան զգում է, թե իր պատմվածքի վոր տեղը յերեխաներին ավելի յե դուր գալիս և աշխատում է այդ մասն ավելի տպավորիչ պատմել։

Յերեխաներին դիտելով, զգում ես, վոր պատմածը նրանց վրա խոր ազդեցություն է թողել. նրանք իրենցից անկախ ինչ

վոր շարժումներ են անում, վորը ցույց է տալիս նրանց ապրումները։

Յերբ պատմությունը վերջացավ, յերեխաները մի բոպե հանգիստ մնացին, ապա դաստիարակին խնդրեցին նորից պատմել և նկարները ցույց տալ։ Յերեխաներից մեկն ասաց.—«Յես այդ գրքից ունեմ, ամեն որ նայում եմ նկարները, շատ հետաքրքիր է»։ Նկարները դիտելով, յերեխաներն այսպիսի դիտողություններ եյին անում։ Սպարտակն ասում է—«Սուսաննան ուզում է հերոս ոդաչու դառնալ. նա գնում է ընկեր ՍՏԱԼԻՆԻ մոտ. յերբ մեծանամ, յես էլ ոդաչու կդառնամ»։

Մայիսը, դիմելով Սպարտակին, ասում է.—«Իսկ դու գիտես, վոր յեթե վտանգ լինի, մարդիկ պարաշյուտով ոդից կիջնեն»։

Խմբակային սենյակից դուրս գալով, մի քանի յերեխաներ սկսեցին սվվացնել և ոդանավ խաղալ։

Այս ձեվի արտահայտությունները յերեխաները շատ են անում. դա ցույց է տալիս, վոր դաստիարակի պատմածը հասել և յերեխաներին և թողել իր ազդեցությունը։

Ահա ինչ է պատմում ինքը՝ դաստիարակն իր մասին—Պարապմունքին պատրաստվելիս, յես նախ խորը մշակում եմ իմ պատմվածքը, մի քանի անգամ պատմում եմ ինքս ինձ համար, ուշադրություն եմ դարձնում ամեն մի բառի ճիշտ արտասանելու վրա, վորպեսզի, վորքան կարելի յե, հեշտ յուրացնեն պատմությունը և կարողանան վերարտադրել այն։

Բացի փոքրերի համար գրված գեղարվեստական պատմվածքներից, յես ոգտվում եմ նաև մեծերի գրականությունից, թերթերից և այն մատչելի յեմ դարձնում յերեխաների համար։

Յերեխաները առհասարակ սիրում են, յերբ նրանց համար պատմում ես և վոչ թե կարդում։

Ստացած տպավորությունները նրանք արտացոլում են իրենց խաղերում, նկարներում և այլն։

Յերեխաների լեզվի զարգացումը կապում եմ և նկարչության հետ. սկզբում յերեխաները չեյին կարողանում ասել թե ինչ են նկարել, նրանք միայն ապանձին առարկաների անուններ եյին ասում. յես աշխատել եմ յերեխաներին սովորեցնել կապակցված կերպով պատմել նկարի բովանդակությունը, և հիմա մի քանիսը կարող են պատմել իրենց նկարների բովանդակությունը։

Լեզվի զարգացման նպատակով յես ոգտագործում եմ վոչ միայն պատմությունը, ընթերցումը, լավ նկարը, հեքիաթները, վոստանավորները, այլ և անհատական զրույցները զրոսանքների և առավոտյան հավաքի ժամերին։

Ընկ. Ֆլորա Յեղյանը մեր լավագույն աշխատողներից է։ Նա դեպի յերեխաներն ունեցած իր ուշադիր և անհատական մոտեցումով, մանկավարժական դաստիարակչական աշխատանքի բազմապիսի պրիյոմներով ու ձեռնարկությամբ դաստիարակում է բազմակողմանի զարգացած յերեխաներ։

Ընկ. Ֆլորան տիրապետում է պատմելու վարպետությանը և, յեթե նա շարունակի իր վրա աշխատել, խոստանում է առմունքի ասպարիզում ավելի ևս հաջողություններ ունենալ։

Նախադպրոցական ժառայական աշխատողները պետք է ծանոթանան ընկ. Ֆլորա Յեղյանի աշխատանքներին և նրա հաջող փորձը փոխադրեն իրենց հիմարկները։

Կազմեց Ա. Հունանյան

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-ում ԿԸՊ
Ա. Հ. Ա. Մասիսյան
Մանկական անվան

Գրավոր № 1, հրատ. № 2
Տիրաժ 1000
Գլավլիտի լիազոր 2—1065
Հանձնված հրատարակությանը փետրվարի 10-ին
Ստորագրված տպելու փետրվարի 25-ին

Հայկական ԽՍՀ Լուսժողկոմատի հրատարակչություն,
Լենինգրատի տպարան, Յերևան Տերյան, փողոց № 127

Карл Маркс атын

ՀՀ Ազգային գրադարան
NL0223660

ԳԻՆԸ 50 կ.

50. 722